ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

Մանուկյան Հ.Վ. (Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան)

hmayakmanukyan@gmail.com

Ներկայացման ամս.՝ 09.01.20
գրախոսման ամս.՝ 12.01.20
տպագրության ընդունման ամս.՝ 27.01.20

Ուսումնասիրված է հաշտարարության սոցիալ-հոգեբանական գործառույթների վերաբերյալ ուսանողների և դասախոսների իրազեկվածության աստիճանը, ինչպես նաև նրանց վերաբերմունքը հաշտարարների մասնագիտական կոմպետենցիաների վերաբերյալ: Ցույց է տրված, որ հետազոտվողների մեծամասնությունը տեղեկացված չեն հաշտարարության (մեդիացիայի) ինստիտուտի դերի և գործառույթների մասին: Հայտնաբերված է անվստահության բարձր աստիճան միջնորդության այդ տիպի ինստիտուտի նկատմամբ: Դուրս են բերվել մեդիատորների մասնագիտական կարևոր կարողությունները և հմտությունները, որոնք անհրաժեշտ են արդյունավետ հաշտարարություն իրականացման համար*:*

Հանգուցային բառեր՝ *քաղաքացիաիրավական խնդիրներ, հաշտարարություն, սոցիալ-հոգեբանական տեսակետներ, տեղեկացվածության, մասնագիտական հատկություններ:*

Հաշտարարության ինստիտուտը (Mediation Institute[5]) սկսել է գործել նախորդ դարի յոթանասունական թվականներին ԱՄՆ-ում և քսան տարի անց Եվրոպական մի շարք երկրներում: Այժմ այն արդեն կոնֆլիկտների և վեճերի լուծման կայացած մեդիացիայի համակարգ է, որը զբաղվում է քաղաքացիաիրավական բազմաբնույթ հարցերով և օգնում է դատական համակարգին մի կողմից, իսկ մյուս կողմից քաղաքացիներին և կազմակերպություններին ավելորդ ֆինանսական և հուզական բեռնվածությունից ազատվելու հարցում: Միջազգային փորձը հուշում է հաշտարարության հիմնական առավելությունները (International Mediation Institute)՝ այն է. ավելի էժան և արագ, քան վեճերի լուծման այլ ձևերը, ինչպիսիք են դատական գործընթացը, օգնում է պահպանել և բարելավել կողմերի միջև հարաբերությունները, ցույց է տալիս հարգանք և արժեք հակամարտության մեջ ներգրավված մարդկանց համար, օգնում է մարդկանց հասնել և լուծել խնդրի առանցքը, կարող է իրավիճակները ձևափոխել ավելի լավի, պայմանագրեր է ստեղծում, որոնք կողմերը ցանկանում են պահպանել, և ամենակարևոր պահանջներից մեկը, որ սերտիֆիկացված

[5] https://www.imimediation.org/find-a-mediator/

միջնորդները ենթակա են մասնագիտական վարքի օրենսգրքի [8]: Հարկ ենք համարում նշել, որ բնակչության իրազեկվածությունը հաշտարարության ինստիտուտի նշված առավելությունների մասին կնպաստի բազմաթիվ վեճերի և կոնֆլիկտների կանխարգելմանը:

Հայաստանում հաշտարարության ինստիտուտի զարգացումը կապվում է վերջին տասնամյակի հետ, ընդ որում առավել շատ զարգացել է մեզ մոտ ֆինանսական հաշտարարության ինստիտուտը, որն իր գործառույթներով ավելի շատ նման է խորհրդատվական և տեղեկատվական գրասենյակի, քան ընդունված հաշտարարության ինստիտուտի: Վերջին տարիներին փորձեր արվեցին կայացնելու և զարգացնելու վերոնշյալ ինստիտուտը նույն սկզբունքով, ինչ գործում է մեդիացիայի միջազգային հարթակում:

Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվեցին վերապատրաստման դասընթացներ, որի մասնակիցները հիմնականում գործող փաստաբաններ, իրավաբաններ էին: Այսօր Հայաստանում գործում են 55 արտոնագրված հաշտարար և 2 մշտապես գործող հաշտարարական հաստատություններ[2]: Վերոնշյալ ռեեստրում գրանցված հաշտարարները իրականացնում են աշխատանքներ քաղաքացիաիրավական, առևտրային, կորպորատիվ, ընտանեկան, աշխատանքային ոլորտներում: Եվ չնայած այն հանգամանքին, որ որոշակի քայլեր կատարվել են հաշտարարության ինստիտուտի ձևավորման և զարգացման գործում, սակայն որպես այդպիսին հաշտարարության ինստիտուտը ՀՀ-ում կարելի է համարել դեռ չկայացած: Սակայն դրա անհրաժեշտությունը և հրատապությունը կասկած չի հարուցում, հաշվի առնելով փոխակերպվող հասարակությունում ծագող բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրները և կոնֆլիկտները անձ-անձ, անձ-կազմակերպություն, կազմակերպություն-կազմակերպություն հարաբերություններում մի կողմից, մյուս կողմից դատարան դիմելու և ողջ գործընթացի ֆինանսական և հուզական մեծ ծախսերը, ինչպես նաև նույնիսկ դրական ելքի ժամանակ, այդ գործընթացի շարունակական լինելը, տևականությունը:

Բովանդակային վերլուծության արդյունքում բացահայտվեց, որ ՀՀ-ում արտոնագրված հաշտարարները կրթությամբ իրավաբաններ են[1]: Միանշանակ է, որ հաշտարարության արդյունավետության ապահովման համար կարևոր է իրավաբանական կրթությունը, սակայն քիչ կարևոր չէ նաև հաշտարարի հոգեբանական պատրաստվածության աստիճանը, ինչպես նաև անձնային և հոգեբանական առանձնահատկությունները, որոնք անհերքելի մեծ նշանակություն ունեն հաշտարարության ողջ գործընթացում: Անհրաժեշտ է շեշտել, որ մեդիատորի կարևոր գործառույթներից է հանդիսանում երկու հակամարտող կողմերին կարողանալ նստեցնել բանակցությունների սեղանի շուրջ, ինչպես նաև կարողանալ մասնակիցների մոտ բարձրացնել իրական պահանջմունքների գիտակցման մակարդակը, որն ընկած է կոնֆլիկտների լուծման հիմքում:

Այսպիսով, կարելի է նշել, որ հաշտարարության ինստիտուտի կայացման և զարգացման համար անհրաժեշտ աշխատանքներ պետք է տարվեն տարբեր ուղղություններով: Նախ և առաջ, հրատապ է բարձրացնել քաղաքացիների իրազեկվածության մակարդակը հաշտարարության ինստիտուտի առկայության և դրա գործառույթների վերաբերյալ: Բացի այդ նույնքան կարևոր է մեդիատորների ընտրությունը և հավատարմագրումը կառուցել մասնագիտական հիմքերի վրա, հաշվի առնելով հոգեբանական դիմանկարի համապատասխանությունը մասնագիտությանը: Չնայած այս հիմնախնդրի կարևորությանը աշխարհում, և մասնավորապես ՀՀ-ում, սակավաթիվ են այն աշխատանքները, որոնք նվիրված են մեդիատորի անձնային և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություններին: Այսպես, օրինակ, Օ. Ալախվերդովան նշում է, որ իրենց հետազոտություններում, նվիրված որոշ հոգեբանական առանձնահատկությունների դերին հաշտարարության գործընթացում, նշանակալի կապեր հայտնաբերված չեն: Ըստ Օ. Ալախվերդովայի, հնարավոր է այն պայմանավորված լինի հատկությունների սխալ ընտրությունով [4]: Մեդիատորների գործունեության ուսումնասիրությունները առավել շատ ծավալվում են նրանց կատարած գործառույթների, հաշտարարության գործընթացի, պայմանների և այլ բնութագրիչների շուրջ [5]: Այսպես, ՌԴ–ի հաշտարարների միության (Лига медиаторов РФ) կողմից առաջարկվող մասնագիտական ստանդարտում մեծ տեղ են զբաղեցնում բնագավառին համապատասխան գիտելիքները և մասնագիտական կարողությունները [5, էջ 432]:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի որոշ սոցիալ-հոգեբանական տեսակետներ և հարցման միջոցով արձանագրել հաշտարարի մասնագիտական կարևոր հատկությունների համախումբը, ըստ տվյալ ծառայության պոտենցիալ օգտատերերի:

Նպատակին հասնելու համար առաջադրվեցին մի շարք խնդիրներ, որոնք նախատեսում են ուսումնասիրել հաշտարարության դերը քաղաքացիաիրավվական հարաբերություններում, հաշտարարության ինստիտուտի արդի կարգավիճակը ՀՀ-ում(կոնտենտ վերլուծություն), ինչպես նաև բացահայտել հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունները, ըստ այդ ծառայության պոտենցիալ օգտատերերի:

Հետազոտությանը մասնակցել են 76 ՀՀ քաղաքացի 18-55 տարեկան, տարբեր մասնագիտությունների, մասնագիտական կայացման տարբեր փուլերում գտնվող քաղաքացիներ: Ընտրանքի ձևավորումը կրել է պատահական բնույթ:

Հետազոտության մեջ կիրառվել է հարցման մեթոդը, կոնտենտ վերլուծության և ռանգավորման մեթոդները:

Հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը արձանագրեցին քաղաքացիաիրավական խնդիրների հաշտարարության սոցիալ-հոգեբանական որոշ տեսակետներ: Ընտրանքի 66% (1-ին խումբ, 18-24 տարեկան) եղել

են ուսանողներ, 34%-ը (2-րդ խումբ, 25-55 տարեկան)՝ տարբեր բնագավառների դասախոս-մասնագետներ: Այն հարցին, թե վստահում եք արդյոք հաշտարարության ինստիտուտին, 1-ին խմբի հարցվածների գերակշռող մեծամասնությունը (28 հոգի) պատասխանել է, որ իրենք իրազեկված չեն դրա առկայության և գործառույթների մասին: Մասնակիցների 11% (կամ 9-ը հոգին) տվել են դրական պատասխան, որ իրազեկված են և վստահում են: Հարկ է նշել, որ իրազեկված ուսանողները մասնագիտանում են իրավաբանության և միջազգային հարաբերությունների ոլորտում: Հարցված 26 մասնագետներից 18-ը վստահում են հաշտարարության ինստիտուտին, և, 22-ը կդիմեն անհրաժեշտության դեպքում: Այստեղ ևս հետաքրքրական է այն փաստը, որ դրական պատասխան տված մասնագետների մեծամասնությունը բիզնես ֆինանսական ոլորտի աշխատակիցներ են: Եվս մեկ դիտարկում, որը իրականացրել ենք հարցման ընթացքում՝ կանանց և տղամարդկանց միջև վերաբերմունքի տարբերությունն էր: Եվ ուսանողների շրջանում, և մասնագետների շրջանում արական սեռի ներկայացուցիչների շրջանում վստահող և այդ ծառայությանը անհրաժեշտության դեպքում դիմող քաղաքացիների քանակը անփոփոխ էր, այն դեպքում, երբ իգական սեռի ներկայացուցիչների դիմելու հավանականությունը ավելի մեծ է, քան վստահելու:

Ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից Հայաստանում հաշտարարության ինստիտուտի առկայության, դրա գործառույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը, գտնվում է շատ ցածր մակարդակում: Իսկ այն սակավաթիվ քաղաքացիները, ովքեր իրազեկված էին և վստահում են այդ ինստիտուտին այս կամ այն կերպ մասնագիտորեն կապված են: Այսպես, ուսանողների շրջանում իրազեկվածությունը բարձր է իրավաբանների և միջազգայնագետների մոտ, ինչը նրանց մասնագիտության կրթվածության շրջանակներում օրինաչափ է: Մյուս կողմից աշխատող քաղաքացիների շրջանում իրազեկվածությունը բարձր էր ֆինանսական ոլորտի աշխատակիցների շրջանում, ինչը, հնարավոր է պայմանավորված է ՀՀ-ում ֆինանսական հաշտարարության ինստիտուտի կայացվածության հետ:

Սակայն, ինչպես նշում է Հ. Հովհաննիսյանը, իր Արմենիա Սպուտնիկին տրված հարցազրույցում, ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ և՛ հաշտարարների ընտրության, և՛ քաղաքացիների վստահության հետ կապված: Քաղաքացիների հետ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է շեշտադրել հաշտարարության ժամանակ գաղտնիության սկզբունքը, ժամանակի ծախսը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հաշտարարության ժամանակ քաղաքացին ինքն է որոշում կայացնում ու յուրաքանչյուր պահին կարող է հրաժարվել հաշտարարությունից միակողմանի»[3]:

Այժմ անդրադառնանք հաշտարարների այն հատկություններին, որոնք նշանակալի դերակատարություն ունեն մեդիատորների մասնագիտական

կայացման մեջ ըստ քաղաքացիների: Մեր կողմից կազմված հարցարանի պատասխանների հիման վրա ռանգավորվել են այն հատկությունները և ունակությունները, որոնք ըստ հարցվածների անհրաժեշտ են հաշտարարների արդյունավետ գործունեության ապահովման համար (տե՛ս աղ.1):



Նկար 1. *Հաշտարարների (մեդիատորների) մասնագիտական կարևոր հատկությունների ռանգավորման արդյունքները (n=76)*

Ինչպես երևում է աղյուսակից, ըստ հարցվածների հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունների մեջ առաջնային տեղ են զբաղեցնում օբյեկտիվությունը, ռացիոնալիզմը, տրամաբանությունը, ինչպես նաև հաղորդակցման հմտությունները, մասնավորապես մտքերը հստակ ձևակերպելու, լսելու կարողությունները և այլն: Ամենացածր միավորներ հավաքել են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են հույզերի վրա հիմնված և ինտուիտիվ որոշումներ ընդունելու հմտությունները: Ստացված արդյունքների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում խոսել այն մասին, որ հաշտարարության ինստիտուտի պոտենցիալ օգտատերերի համար կարևորվում են մասնագիտական կոմպետենցիաները, տրամաբանական, ռացիոնալ որոշումների ընդունման հատկությունները: Ուշադրություն չի դարձվում հաշտարարի արտաքին տեսքի, բանավոր խոսքի կառուցման, ոչ վերբալ հաղորդակցման հմտություններին, որոնք սակայն քիչ կարևոր չեն բանակցությունների վարման ընթացքում: Ց. Շամլիկաշվիլիի և Ս. Խարիտոնովի աշխատանքում նշվում է, որ հաշտարարության ինստիտուտի պոտենցիալ օգտատերերի համար կարևորվում է նաև

հաշտարարի ընտանեկան կարգավիճակը, պրոֆեսիոնալիզմը, ինչպես նաև արտաքին տեսքը: Ընդ որում, նրանց կողմից իրականացված հետազոտության մեջ ցույց է տրված, որ ընտանեկան վեճերը հանգուցալուծող հաշտարարների համար կարևոր է ընտանեկան կարգավիճակը, այն դեպքում, երբ քաղաքացիա-իրավական վեճերի լուծման համար կարևորվում է մեդիատորների պրոֆեսիոնալիզմը, տարիքը[6]: Հեղինակներից մեկը կարևորում է հաշտարարության գործընթացում ճշգրիտ և նպատակային խորհրդատվության դերը [7, էջ. 9]:

Միևնույն ժամանակ, հետաքրքրական են այն տվյալները, որ անկախ մասնագիտական կայացման փուլից, իգական սեռի ներկայացուցիչները առավել հակված են հաշտարարության ինստիտուտին վստահելու և անհրաժեշտության դեպքում դիմելու: Նաև սեռային տարբերություններ գրանցվել են ըստ այնպիսի պատասխանների, ինչպիսիք են ըստ գաղտնապահության, համբերատարության և անաչառության հատկությունների:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործնական միջոցառումներ քաղաքացիների իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, հետազոտության արդյունքների վերլուծությամբ, պարզորոշվեց ռացիոնալ, վերլուծական, ծրագրավորված որոշումների ընդունման կարողությունների, ինչպես նաև խոսքային (վերբալ) հաղորդակցման հմտությունների նշանակալի դերը հաշտարարների աշխատանքի արդյունավետության բարձրացման մեջ ըստ հաշտարարության ծառայությունից պոտենցիալ օգտատերերի:

Գրականություն

1. Արտոնագրված հաշտարարներ ռեեստր://http://www.justice.am/page/582, (այց՝ 22.12.19)
2. Արտոնագրված հաշտարարներ ռեեստր://Մշտապես գործող հաշտարարական հաստատությունների ռեեստր: http://www.justice.am/page/582, այց՝ 09.01.2020
3. Մեդիացիան նոր բառ է հայկական իրավագիտության մեջ://https://armeniasputnik.am/society/20170321/6759008/armenia-iravaban-mediacia.html, (այց՝19.11.2019)
4. **Аллахвердова О. В.** Обучение медиаторов и формирование компетенций. // Вестник СПбГУ. Сер. 16. 2012. Вып. 3, С. 31-41
5. Медиация. Учебник/ Под ред. А. Д. Карпенко, А.Д. Осиновского- СПб: Третейский суд. М., Статут, 2016, 470 с.
6. **Шамликашвили Ц.В, Харитонов С.В.** Качества специалиста по урегулированию споров в представлениях потенциальных потребителей такого род услуг и медиаторов. // Глобальный научный потенциал. Материалы для дискуссии. N10 (43), 2014, с.113-120

http://fedim.ru/wp-content/uploads/2014/10/SHamlikashvili-i-dr_Globalnyj-nauchnyj-potentsial_2014_10.pdf, (шjg` 09.01.20)
7. **Шамликашвили Ц.А.** Медиация как современная тенденция развития правовой помощи и юридического консультирования//Вестник Московского университета. Серия 11. Право, 2011, с. 8-17
8. International Mediation Institute//https://www.imimediation.org/find-a-mediator/, (шjg` 10.01.2020).

SOME SOCIO-PSYCHOLOGICAL ASPECTS OF MEDIATION IN CIVIL LEGAL ISSUES

Manukyan H.V. (Armenian State Pedagogical University, Yerevan, Armenia)

The establishment of the institution of mediation is associated with a complex of legal, social, economic and psychological factors. The study aims to determine the level of awareness of the phenomenon of mediation among students and teachers of Armenian universities, as well as their attitude to the professional competencies of mediators. The survey showed that most of the subjects are not aware of the role and main functions of the mediation system. A high degree of distrust in the institution of mediation was also revealed. According to the results of the survey, important professional skills are identified that are necessary for effective mediation in civil disputes.

***Keywords**: civil law issues, mediation, socio-psychological aspects, awareness, professional qualities.*

НЕКОТОРЫЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МЕДИАЦИИ В ГРАЖДАНСКО-ПРАВОВЫХ ВОПРОСАХ

Манукян А.В. (Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, Ереван, Армения)

Становление института медиации связано с комплексом правовых, социальных, экономических и психологических факторов. В исследовании поставлена цель оценить уровень осведомленности о феномене медиации среди студентов и преподавателей университетов Армении, а также их отношение к профессиональным компетенциям медиаторов. Опрос показал, что большинство исследуемых не осведомлены о роли и основных функциях системы медиации. Также выявлена высокая степень недоверия к институту медиации. По результатам опроса выявлены профессионально важные навыки, необходимые для эффективного посредничества в гражданско-правовых спорах.

***Ключевые слова**: гражданско-правовые вопросы, медиация, социально-психологические аспекты, осведомленность, профессиональные качества.*